

ՏԱՆՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлисс. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ խմբագրին
Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նա-
մակ թիւրքերէն: Արտաքին լուրեր: ԽԱՆ
ԼՈՒՐԵՐ: ՀԵՌԱՅԻՐՆԵՐ: ՏԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Կաղզուան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 10 հոկտեմբերի

Զեր «Մշակ» լրագրի № 138-ի մէջ մէկ պարտն,
կոչուած կեղծ անուն տոտարացիութեամբ, աշխատել
է իր հաղորդած մի քանի սող նամակով արա-
տաւորել թէ իմ անձնաւորութիւնս և թէ իմ ծա-
նայական պաշտօնավարութիւնս չէս գրում է, թէ
մէկ երիտասարդ կամեմաւոր անցագիր ստանալ ու-
րի քաղաք դնալու, դիմում է հարկատուաց կառավա-
րութեանը (Мѣщанская Управа), որ ծառայում
եմ եմ հաշուապահութեան պաշտօնով և իբր դիմ-
ումս պահանջել եմ նորմայից 51 ռուբլի 95 կո-
պեկ արտաւել մնացած հարկ, փոխանակ 9 ռուբ-
լի 10 կոպեկ և խնդրում է հրապարակաւ յայտ-
նել այս հանդիսի զազանները:

Պարոն Առանձին կասկածը փարատելու և ճշ-
մարտութիւնը վերականգնելու համար, խնդրեմ,
յարգել խմբագիր, ձեր լրագրի մերձակայ համարնե-
րից մէկում հրատարակել հետեւեալ: Արդարեւ մէկ
երիտասարդ, բէկլարեանց, ազգանունով, այս տար-
ւայ մարտ թէ ապրիլ ամսում կամեմաւոր անցագիր
ստանալ, հարցրեց ինձանից թէ որքան պիտի վճա-
րէ միսման փամանակաւ անցագիր ստանալու
համար: Ես ինչպէս կարդն է մատնաներից տե-
ղեկութիւն հանելով, յայտնեցի, թէ նա պէտք է
վճարէ անցեալ 1882 տարւանից իր վրա ապա-
ռիկ մնացած քաղաքային հարկը, 1 ռուբլի
50 կոպեկ և ուրի 1883 տարվայ ամբողջ հարկը,
թէ քաղաքային և թէ արքունական, 47 ռուբլի

50 կոպեկ և միսման անցագրի թերթի (БЛАНК)
դիւր 1 ռուբլի 95 կոպեկ. ընդամենն 50 ռուբլի
95 կոպեկ (ոչ թէ 51 ռուբլի 95 կոպեկ), և նա
այդ փողերը պէտք է յանձնէր, ըստ սովորութեան,
հարկաժողովի գանձապետին և (ոչ թէ ինձ) յետոյ
կարող է տանալ խնդրած անցագիրն: Իսկ այ բէկ-
լարեանցը պատմութեանց թէ այդ ապառիկ հար-
կերը կայսեր թագադրութեան հրովարտով բաշ-
խուած են: Ես բացատրեցի նորան թէ, արդարեւ,
բաշխուած են, բայց ոչ այն 1883 տարւանը,
այլ մինչև ներկայ տարիս փոքր ժամանակից յի-
տոյ բէկլարեանցի բարեկամ պ. Մերազովը խնդ-
րեց հարկառու կառավարութիւնից տալ բէկլա-
րեանցին խնդրած անցագիրը, բայց երբ սորան էլ
յայտնում են, որ միսման անցագիր ստանալու
համար պէտք է վճարէ 50 ռուբլի 95 կոպեկ, աւ-
հատութիւնս, որ պահանջը օրինաւոր է, հա-
մաձայնում է ստանալ երեք ամսեայ անցագիր,
վճարելով միայն 1883 տարւայ մնացած քաղա-
քային հարկը 1 ռուբլի 50 կոպեկ, 1 ռուբլի
10 կոպեկ երեք ամսեայ թերթի (БЛАНК) դիւր
և 21 կոպեկ փոստային ծախսը, ընդամենն 2 ռուբ-
լի 81 կոպեկ (ոչ թէ 3 ռուբլի 10 կոպեկ). իսկ
1883 տարւայ արքունական և քաղաքային հարկը,
ըստ խնդրանքի նորա, դարձեալ մնում է նորա վի-
րա ապառիկ, որ կը ստացվի իր փամանակին: Այս-
պիսի մի պարզ բացատրութիւն կարձեւ հակա-
նալի կը լինէր ամեն մի բանիմաց և խելահաս
մարդու, բայց թէ պ. բէկլարեանցը ինչպէս չէ կա-
մեցել հակառակ պայսլի մի պարզ հայտ, ահա
այդ է անհասկանալի, երևի այդ նորան ձեռնուռ
չէր կամ անձնական կրթից պակասել նորա մտա-
ւոր գոյնը և ֆիզիքական տեսութիւնը: Ուրեմն ուր
մնացին պ. կոչուած վիրաւորը և դատարարմիտ
բառերը: Թիֆլէ նա չէր կարող ճիշտ տեղեկանալ
ուրից հարկ և այնուհետ հրատարակել, չէ որ այն
անտեղի բառերը կամ ինքը հրապարակաւ պէտք
է վերադարձնէ իրան, կամ պէտք է ինձանից
իրան պատշաճ յաւելումով յետ ընդունէ:

Արդարեւ ես իմ պատուին նախանձանդիր լի-
նելով հրապարակաւ յայտնում եմ, որ պ. կոչու-
ած չառութեան և թէ տեսակի լաւութեան կողմից,
թիւրքն է, յետոյ կարծիք կեռասը, ծիրանը, տա-
նը, խնձորը, սալը և վերջապէս խաղողը, որ
չառ քիչ է, դնելով և ցածի այդիներում, Արաքսի
ափերի մօտ և եղածն էլ լաւ չէ հասնում, մնում է
թիւր. ու կանաչ: Ազանցը գտնվում է քաղա-
քից 3—4 վերստ հեռավորութեամբ, բաւական մեծ
տեղ է բռնում, տալիս է տարեկան աւելի քան
150,000 պոտ աղ: Չը նայելով որ կաղզուանի
աղը անհամեմատ ստոր է կողքի աղից, այնու
ամենայնիւ աւելի լաւ է դուրս գնում, մինչև ան-
գամ ամբողջ Երևանի էլ է դիմում այս աղահա-
բին, թէ և այնքան մօտ է կողքին: Պատճառը շատ
հեշտ բացատրվում է ճանապարհների յարմարու-
թեամբ, որը կայանում է գլխաւորապէս նրանում,
որ անցնում է հարուստ արօտատեղերով, ուրեմն
և բեռնակիր անասուններն, ունենալով ձրի ու
ուստ ուսելիք, ծախս չեն նստում դիւղաղուն:
Գալով բուն ճանապարհներին, պէտք է ասած, որ
չառից դուրս անայտն են. բացառութիւն է կաղ-
մում միայն Գարսից կաղզուան տանող նոր շի-
նաձ մեծ ճանապարհը: Իսկ կիթ չրջակայքի ճաւ-
ղէն նախադիւր են կաղմում, այն ժամանակ կաղ-
զուանը կարող է առաւել լաւ կենտրոն լինել իր
չրջակայ քաղաքի գիւղերի համար, թէ չէ այժ-
ման ճամբաները, կրկնում ենք, բոլորովին ան-
յարմար են հաղորդակցութեան. մեծ մասամբ անց-
նում են այնպիսի վտանգաւոր աղաւաճների
վրայից, որ անցողի (ի հարկէ ոտաւոր կամ ձիա-
ւոր, սալեր չեն անցնում) կողմից մի անգուշ-
բայը բաւական է նրան Արաքսի խոր յատակի
մէջ զորելու համար:

Քաղաքի բնակիչները վերջին ուսումնական
պատերազմից առաջ եղել են գլխաւորապէս տա-

նի խնդրած բանակին նորա անմտահասութե-
թիւնը և անհասկացողութիւնն է: Թող
պ. կոչուած միամիտ լինի, որ շատ լաւ գիտեմ
նորա անունը էլ, դատարանի ճանապարհն էլ:
Գաբրիէլ Շահվերեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ առաջանք պրոֆէսոր Անդ-
րէաս Արծրունու նոր միակալութեան հետա-
զոտութիւն գերմաներէն լեզուով ն էֆրիտի մա-
սին: Բորշլըրը կրում է հետեւեալ վերնագիրը.
«Neue Beobachtungen am Nephrit und Jadeit»
von Professor A. Arzruni. Մեր երիտասարդ
պրոֆէսորը այդ գրութեանը, որ խոսում է այնպիսի
մի հարցի վրա, ն էֆրիտի վրա, որ այս քաղ-
կի հետաքրքրում է Գերմանիայում բոլոր ուսում-
նական շրջանները և մեծ պոլեմիկայի առիթ
է առաւել գիտնականների մէջ, քաղկ է իր սե-
փական դատաստութիւնից, որ նա կարողացել է
ներկայ 1883 թիւ մարտի 17-ին Բերլինի Անթ-
րոպոլոգիական ընկերութեան մէջ: Մեր ստացած
բորշլըրը մի առանձին հրատարակութիւն է պ.
Արծրունու յօդուածի, որ ապոված է եղել «Zeit-
schrift für Ethnologie» ամսագրի մէջ, որ խո-
րագրվում Ա. Բառտիմից, Բ. Հարտմանից, Բ.
Վիրտովից և Ա. Ֆոստից բաղկացած խմբագրա-
կան յանձնաժողովից:

ԱՅՈՒՔԱՎԱՐԻՑ մեզ գրում են հոկտեմբերի
9-ից հետեւեալ. «Եղանակը շատ վատ և փոփո-
խական է: Փոփոխութիւնը շրջից դէպի սաս-
տիկ ցուրտը շատ արագ է: Սարերը ձիւնով ծած-
կվում են, յաճախ անձրևներ են չալիս և խանդա-
րում են գիւղացիներին վերջացնել կալերը:

Նոյն տեղից մեզ գրում են և այն որ վերջին
տարիներս Ախալքալաքի գաւառում բաղձացել են
սպանութիւնները: Այս օրերս, օրինակի համար,
Ախալքալաքի մօտակայ գիւղերից միում մի
ձիւններ ու բրդեր, փոքր թւով և հայեր. իսկ պա-
տերազմից յետոյ տաճիկները համարեա բոլորն էլ
անցել են Տաճկաստան՝ քաղաքի կամ աւելի պա-
կաս քիչ վաճառելով իրանց այգիներն ու աները
նորեկներին: Այժմ կայ 5-6 հարիւր տանից աւե-
լի բնակիչ, որոց մեծամասին մասը հայեր են, մնա-
ցածը յայն, քուրդ, տաճիկ, ռուս:

Բնիկներ. Ֆիզիքական կազմ. մուսոր ու նիւ-
թական դրութիւն. պարագմունքները: Նորեկներ
նիւթականք. պարագմունքները. ձգտումները. յա-
րաբերութիւնները բնիկների հետ:

Իրենց ազգայինների կիսնքով հետաքրքրվող
ընթերցողներին փոքր է շատ տեղեկու-
թիւն տալու համար, մենք կաղզուանի բնակիչ-
ներին բաժանում ենք երկու դասակարգի, ինչպէս
որ և է իսկապէս—բնիկների և նորեկների:
Բնիկներն, այսինքն նրանք, որոնք կային պա-
տերազմից առաջ և մնացին ու մնում են իրենց
պապական բնակավայրում իբրև հաւատարիմ պա-
հպաններ իրենց նախնիներին սուրբ զերեզմաննե-
րին, ընդհանրապէս առողջակազմ են, բարձրա-
հասակ, կարմրաթուխ գոյնով, գլեթէ հանգած ու
մաքած աւելնով: Կաղզուանցիք, ինչպէս և յա-
լամադային: Հաղկ է պատահում որ նրա երե-
սին ծննդը ծաղկի, հէնց այդ ժամանակ էլ այդ
ծաղիկ ծննդը թառամած է: Մահմադականների
հարստահարութիւնները դեռ օրօրոյցի մէջ գրոշ-
մն են իրենց սև կնիքը կաղզուանցի ճակատին:
Մուսուրապէս առաւել ևս խաւար են, աղէտ են:
Նրանք կիսնքն ուրիշ կերպ չեն հասկանում, կիթ
ոչ ինչ և իցէ կերպով անցկացնել իրենց օրերը:
Նրանց հոգատարութեան առարկան լուսացրած

գիւղացի երկաթէ եղանակ սպանել է մի այլ գիւ-
ղացուն:

Ուշագրութիւն ենք դարձնում մեր ընթերցող-
ներին «Մշակի» ներկայ համարում տպւած բա-
նասիրականի օկոյրի վրա: Հեղինակը լաւ գիտող
է և զիտէ հետաքրքրել ընթերցողին:

«Русск. Кургерь» լրագրի լսել է, որ այնքան
չառ ֆիզիքներն են ցանկութիւն յայտնել մտնելու
արարական, պարսկական և թիւրքաց լեզուների
կուրսերը, որոնք ինչպէս յայտնի է պէտք է բացվեն
արտաքին գործերի մինիստրութեան առիական բաժ-
նում, որ առաւելապէս այդ կուրսերում կընդուն-
վեն նրանք, որոնք աւելի լաւ գիտեն ֆրանսերէն
լեզուն:

Այսօր Արծրունու թատրոնում ռուս սիրողները,
որոնք պատկանում են բարձր դասակարգին, Թիֆ-
լիսի ռուս Բարեգործական ընկերութեան միջոց-
ները աւելացնելու նպատակով կը տան հետեւեալ
պիէսաները. «Въ ожидании поезда», «Чудовище»
և «Чашка Чаю». Ներկայացման սկիզբը լինելու
է 8 ժամին:

«Русск. Кургерь» լրագրում կարդում ենք.
Ի նկատի առնելով այն գանդառները, որ արվում
են վերջին ժամանակներում ճանապարհների հա-
ղորդակցութեան մինիստրութեան գէնտովներից,
բորսային մասնաժողովներից, առեւտրական քաղաք-
ներից և աղաւթներ ուղարկող զանազան ան-
ձիւններից մեր երկաթուղիների վրա գոյութիւն
ունեցող սակազին նշանակելու կարգի վրա, ճա-
նապարհների հաղորդակցութեան մինիստրը, գե-
ներալ—աղիտանա Պոսիտով, մի գեկուցում ներ-
կայացրեց կառավարչական բարձրագոյն ինստան-
ցիային, որի մէջ ցոյց է տալի թէ անհրաժեշտ է
առանց բացառութեան բոլոր երկաթուղիների սա-
կազները ենթարկել կառավարչական հսկողութեա-
նը: Ճանապարհների հաղորդակցութեան պ. մինիստ-
րը անհրաժեշտ գտաւ ապաւորում կարգադրել հե-

օրն է: Յառաջ գնալու, իրենց օրերը փոքր է շատ
բարեկեցիւ համար ամենին անհրաժեշտ: Ան-
խատում-վատակում են այնքան, ինչքան որ հար-
կաւոր է քաղաք ու մերկ չը մնալուն: Սլանից
պարզ եղրակայնի է որ նրանք պէտք է աղքատ
լինեն: Գուցէ այս երևոյթը յառաջ է եկել նրանից
որ կայքի ապահովութիւն չէ կրել, ունեցածները
յախշտակել են, ուստի և բնիկները միանգամայն
հրաժարվել են կայք կարողութիւն ձեռք բերե-
լու, իրենց վիճակն ապահովելու, կեանքներն օր-
օրի վրա բարեբեկու ձգտումներից: Նրանք կաս-
կածաւ են և չաղքորոգող, մեծախօս են, իրենք
իրենց վրա անդուս. անձնավտանութիւն և հիւ-
րասիրութիւն չունեն: Նրանց կանայքը շատ փա-
կուած են, աղամարերի երեսից, փախչող, բայց
անարար: Սլանից ցաւելով պէտք է ասենք, որ
այս տեղերում այն ամենական հաւատարմութիւնը,
անարատ վարքը, որ հայ կնիւ վրա՞ փառք
ու պարծանքը, թափն ու պատկն է կազմում վե-
րանալու վրա է: Այս տխրալի հանդամները պէտք
է վերադրել սարկական վիճակից յանկարծակի ա-
ղաւթի (մի որոշ ժամանակ...) անցնելուն և
անցեալ տարուայ սովի հետեւանքին: Այն ժա-
մանակին ենք ասում, երբ քաղցը, երբ աղքա-
տութիւնը մոռացնել էր տալիս ամեն սրբութիւն...
Կաղզուանի շրջակայքում, առաւել ևս սահմանա-
ղիներում, ուր առաւել շատ են պահապան գիւն-
ւորները, ամբողջ գիւղեր կան, որ որ կանայքը
գրեթէ առանց բացառութեան, անաւաղացած
են... Այս է պատճառը որ այդպիսի տեղերում
առատիկ տարածված են արտական հիւանդու-
թիւնները:

Կաղզուանցիներին նիստ ու կացն գլխովին հա-
մեմատ է իրենց մուսոր գարգազման ու աշխա-
տանքին. բնակարանները կեղտոտ, մութ, միայն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

(ՄԻ ՀԱՏՈՒՄԸ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻ ՅԻՇԱՏԱԿԱՆ
ՐԱՆԻՑ)

ԿԱՂԶՈՒԱՆ

Արարատեան նահանգի Արշարունեաց գաւառի
կաղզուան կամ, ըստ օտարաց, կաղզուան քաղա-
քն իր քաղաքի ծառատաններով, այգիներով
ու դաշտերով ընկած է Մայր Արաքսի արևելեան
ափում մի բարձրաւանդակի վրա: Մի կողմից ուր
մուրը անցնում տաճում է Արաքսը, միւս կողմից
գոտեղված է է որ ձիւնաւոր, է որ սրածայր, է
որ տափարակ ըլլողներով, բարձրաբերձ ժայռերով,
երկայնաձիգ ու խոր ձորերով: Քաղաքը ծածկված
է անթիւ անհամար ծառերով, զարդարված է կա-
նաչ ու հարուստ բուսականութեամբ, որը միա-
նալով լեռնազօտիները, երբեմն վայրենի, երբեմն
փափուկ տեսարանների հետ մի սրբուն ու նկար-
չալայել պատկեր է կազմում: Կաղզուանի օրը
քաղցրախորձ ու մեղմ է ամառը, իսկ տարուայ
միւս կողմաններում գրեթէ ցուրտ: Չորս իր ա-
նուշ ու մարսական յատկութեամբ հռչակված է
բոլոր շրջակայքում և անթիւ ջրվիժներ կաղ-
մելով, գոտեմ գոչումով թափվում հոսում է
թէ անցեալում—պատմութեան մէջ և թէ այժմ—
շրջականերում—իր աղահանքով, քաղաքական ու
առատ պտուղներով, որոնցից առաջնակարգը, թէ

տեւալը. բոլոր երկաթուղիական ընկերութիւններին պարտաւորեցնել ճանապարհների հաղորդակցութեան միջնորդութեան հաստատութեանը ներկայացնել վերադարձի սակագնի, ապրանքների դասաւորութեան, ընդունելութեան պայմանների, տեղափոխութեան և բեռները յանձնելու նախագծերը, նոյնպէս պէտք է ներկայացնել վերոյիշեալ միջնորդութեան հաստատութեանը պատասխանները տեղափոխութեան սակագների փոփոխութեան մասին և առանց ճանապարհների հաղորդակցութեան միջնորդութեան, արգելել ընդունելութեան պայմանների, տեղափոխութեան և բեռները յանձնելու սակագների գործադրութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄԻՑ

Պոլիս, 4 հոկտեմբերի

Անդրիոյ դեսպանը քանի որ Պոլիս եկած է, քաղաքական ուշադրութիւնը կեդրոնացած է անոր գործերուն վրայ: Դեսպանին սուլթանի հետ ունեցած տեսակցութեան ամէն մասին վրայ ստոյգ լուրեր դեռ չը տարածուեցան: Առ այժմ սաշափը ստոյգ կենդանի որ լօրդ Տըֆլին իր կարողութիւնը զանազան խնդիրներու մէջ կարելի տեղ մը տուած է հայկական հարցին և թէ բերած է ծրագիր մը Հայաստանի բարեկարգութեան համար: Երազարդին մանրամասնութիւնները չենք գիտեր, բայց կըսուի, թէ այդ ծրագիրը բնական կը մտնէրայ Լիբանանու վարչական կազմակերպութեան: Բ. Գուռը իր ընդդիմութիւնը կը շարունակէ այս ծրագիրը ընդունելու համար: Դեսպանը այս անգամ կը շարժի տարբեր կողմաներով: Գրքին այնպէս կը ցցնէ ամենուն լրբ թէ ու է ճշդում չը բանեցնել Բ. Գրան վրա, այլ պարզապէս խորհուրդ կուտայ անոր, սակայն ներքուստ ուրիշ կերպ կը շարժի: Այս քաղաքականութեան շարժառիթն այն է որ թիւք կառավարութիւնը կը գանգատի եղբի թէ օտարէն այսպիսի բռնաբարական ցոյցեր ըլլալով իր վարկը կը կտրի իր ժողովրդին քով և թէ ինչ բարեկարգութիւններ ալ որ ընէ պիտի կարծուի թէ ինքնաբերաբար չէ ըրած, այլ բռնաբարութեան տեղքն. այսպիսի կարծիք մը տարածուելով Թիւքիոյ ժողովուրդներուն մէջ կառավարութիւնը մեծապէս կը վնասի: Անդրիոյ դեսպանը կը ջանայ հետեւեալ չը վիրաւորել կառավարութեան անձնասիրութիւնը: Աւելորդ է ըսել թէ ինչպէս անձկանալը կը սպասենք այս բանակցութիւններու վախճանին: Այժմէն կարելի չէ յայտնել որոշ կար-

ծիք մը, սակայն հաւանական է որ թրքաց սա մեծ տօնը անցնելէն վերջ խնդիրը կերպարանք մը առնէ: Արդէն ժողովները տեղի կունենան արեւելի պալատը, և հոն կը վիճարանեն Անդրիոյ դեսպանին առաջարկութիւններուն վրայ: Կառավարութիւնը այժմէն պատրաստակամութիւն ցոյց կուտայ ընտրել հայ կառավարիչ Տաճկա-Հայաստանի մէջ կամ երկու գաւառներուն համար: Բայց դարձեալ Գուռը չը յեղի իր ծուռումուռ ճամբաներէն. անկեղծութեամբ չէ որ կուզէ գործել: Գուռը առաջարկել է Անդրիոյ դեսպանին իր ընտրելի հայ կառավարիչ մի քանի հայեր որք Գրան ծառայութեան մէջն են: Սակայն չէ առաջարկած այնպիսի անձեր որոնք ջերմ համակրութիւն գտած Գրան հայերէն, որոնք վարչական և քաղաքագիտական ընտիր յատկութիւններ ունենան և միանգամայն արի ընտրութիւն մը, անհրաժեշտ կարգադրելու համար Տաճկա-Հայաստանի դահուսական վիճակը: Գրան առաջարկած անձերը այնպիսի անձեր են, որք բաւական տաղանդ ունին և դաւադան ճիւղերու մէջ մասնագիտութիւն, սակայն շատ երկչոտ են: Արեւը յարմար են գրասենեակի մը մէջ նստելու խորհրդակցելու և լաւ խորհուրդներ տալու, բայց բոլորովին անընդունակ են կառավարելու: Գուռը այս գիտնալով կուզէ այսպիսի անձեր դնել որպէս զի կարող չըլլան լաւ կառավարել և ինչ ալ Եւրոպայի ցոյց տայ որ հայերն ապիկար են: Մեր մէջ կարող մարդեր կան, բայց Գրան յարեցանելը ապագայ դժուարութիւններու համար փափագելի է որ առ այժմ Եւրոպայի կառավարիչ ըլլայ, եթէ երբեք պիտի ընտրուի քրիստոնէայ կառավարիչ: Մերինները որպիսի ալ աղէկ ըլլան չեն կրնար բաղդատուել եւրոպացի կառավարիչի հետ: Սոյաւեցեալ տեսնել թէ այս շարժումը ինչ կրնանք տեղեկանալ: Իսկ մեր կողմէն լաւ մը չենք ընել, և արդէն պարագայներն այնպէս են որ հիմուհիւմս բան մ'ալ չենք կրնար ընել. մենք զո՞ք ըլլալու ենք անգործ մնալով սխալ չընենք, եթէ կարելի չէ ուրիշ կերպ: Պատրիարքը արեւմտեան դես. հիւանդ է: Ոչ պատրիարքարան կերթայ, ոչ Ազգ. ժողովը, ոչ արեւելի պալատը, ոչ լօրդ Տըֆլին, վնաս զի անանկ փափուկ կաշկռեան մէջ է, որ շատ խոհեմ շարժում է գործիս դժուարութիւն չը յարեցանելու համար: Սաւորի ուրիշ կողմէն ալ տեսակ-տեսակ լուրեր կիւմանան, որոնք մեզի անհանգստութիւն կը պատճառեն: Կըսուի թէ Պատրիարքը կառավարութեան խրկած է, չըսենք հրաժարական, այլ պատճառաբանալ գրութիւն մը որով կը խնդրէ իր առ. սուլթանը ըրած առաջարկներուն շուտ գործադրութիւնը, եթէ ոչ, դժուար կը համարի կարենալ

իր պաշտօնը շարունակել: Բաց ասկէ այնպիսի դժուարութիւններ կը վերագրեն սրբազան Պատրիարքին որոց գործադրութիւնը չենք փափագեր տեսնել: Չենք կարծի որ լաւ կըլլայ հրապարակաւ տեղեկութիւններ տալ այդ տեսակ դժուարութիւններու վրա, շատ բան կը դուռնուի, երբեմն ստոյգ, երբեմն անստոյգ աղբիւրներէ, բայց զորոք մը ամէն գիտցած զրեւու չէ, զի վնաս կրնայ ծագել: Հիմա Տաճկա-Հայաստանի բարեկարգութիւններուն հարցը անանկ վիճակի մը մէջ է որ մենք կը փափազինք որ Պատրիարքը ոչ հրաժարի, և ոչ ալ թրքաց շատ անհաճոյ ընթացքի մը մէջ գտնուի, այլ ընդհակառակն շատ բազմը վարուի աւանդ հետ: Կը ցարկել լուրով, որ Պատրիարքին խորհրդակցանքներն ունեն, չենք գիտեր ինչ դժուարութեամբ, կուզեն սխալ քայլեր առնել ալ Պատրիարքին, բայց սրբազանը կը զգուշանայ: Արեւը մը երբ հայկական հարցը անկեղծաբար վիճակի մը մէջ էր Պատրիարքը կուտար այդ հարցին եղբարական ցնցումներ, որք մեծապէս նպաստեցին մեր հարցին մինչև այս վիճակը հասնելուն: Բայց հիմա պարագայները փոխուած են: Անդրիոյ ստանձնած է կարեւոր դեր, և դուզէ ձմարն մէջ անդրիական հաւատարմիւրդ Գարդանելի առաջ կանգ առնէ, ինչպէս կը կարծուի, մեր մասին մտածենք թէ ինչ ընելու ենք որ գործը դիւրացնենք: Անգամ մը մտերմութեամբ քննելու ենք որ ինչ սոսկալի դժբաղդութեանց հետքն ենք որ ինչ սոսկալի դժբաղդութեանց հետքն ենք որ անհղ տէրութիւնը: Արդի սուլթանը որ գահը բարձրանալէն ի վեր չարաչար կաշխատի, այնպէս որ չես կարծի թէ Արեւելեան սուլթան մը ըլլայ, այլ եւրոպական առաջին նախարարէն մը շատ աւելի կը ճգնի, այս սուլթանը վկայ եղած այնպիսի դժբաղդութիւններուն, որոնք վրա գաղափար մը իսկ չուենէն իր հայրերը, այսպիսի դժբաղդութիւններուն առաջ անկեղծաբար պէտք է: Արդ հիմա որ սուլթանին և Պատրիարքին մէջ լաւ յարաբերութիւններ հաստատուած են, Պատրիարքը ուշադիր է, և պէտք է այնպէս ընէ որ չը վիրաւորէ սուլթանին:

Ներսէս սրբազան իր պերճախօս լեզուաւ և համակրելի ընտրութեամբը պէտք է գրաւէ սուլթանին, և կայսեր անձնասիրութիւնը չուրով ջանալու է որ դիւրացնէ բարեկարգութեանց գործը: Ինչ որ կուզեն թող ըսեն, բարեկարգութիւններուն գործադրութիւնը մեծապէս կախում ունի սուլթանին կողմէն. եթէ սուլթանը չուզի գահընդիւրդ իր իրաւունքը տալ մեզ ալ կուզէ իր շնորհը մը չընդհանրել թող այդպէս ըլլայ, բառի վրա չը խաղանք հիմա, իրականութիւնը նայենք: Չըմոռնանք որ թիւքիւր նմանապէս ազգ են և իրաւունք ունին

որ չը վիրաւորի իրենց անձնասիրութիւնը: Այժմ ատենը չէ գրեմք գրգռելու: Կը հաւատանք որ անհիմն են Պատրիարք սրբազանի վերագրուած խորհուրդներն: Հակառակ դէպքի մը մէջ կը վտանանք:

Սուլթանը իր անձնական բժիշկը խրկած է Ներսէս Սրբազանը նայելու համար, նոյնպէս անցած օր յատուկ իր թիկնապահներն խրկած է սրբազանի մօտ նրա առողջական վիճակը տեղեկանալու:

Հայկական խնդրոյն յաջող կերպարանք մը ստանալու երեւոյթը բաւական թուլացուց գմեղ: Անգործութիւնը վերստին կը տիրէ Պատրիարքարանի մէջ: Վաղ. ժողովը այսօր անձրև է, վաղը արև է, կ'ըսէ, երբեմն նիստ կ'ընէ, երբեմն չընէ: Տեսեալան ժողովը քաղաքակալ վիճակի մէջ է: Տեսեալան ժողովն է որուն ակերտուն մէջն է պատրիարքարանի կեանքը: Ստակ պիտի ժողովն, ծախս պիտի ընէ, և պիտի հսկէ ազգային դրամական գործոց: Չէք սպասել անուշտ որ դրամին և լաւ մատակարարութեան մը օգտակարութեան վրայ խօսենք: Անցեալ տարի երբ կազմուեցաւ այս Տեսեալան ժողովը աղէկ յոյսեր ունէինք և աւանդ ալ պատրաստ էին յօժարութեամբ աշխատել, և իսկ ալ առնէին յաջողութեամբ բայց վերջը անոնց մէջէն հրաժարեցաւ Գարբիէլ էֆ. Նորատուռեկեան որ Ատենապետն էր և միանգամայն ժողովին ոգին: Նորատուռեկեան Գարբիէլ էֆ, որ ձեռ լաւ ծանօթ է ստացաւ Բ. Գրան արտաքին գործերու նախարարութեան բաժնին մէջ մի շատ կարեւոր և ծանր պաշտօն որով չէր կարող Տեսեալան ժողովին մէջ աշխատել ինչպէս որ հարկն էր. ասոր հետ մէկտեղ մի քանի ուրիշ նկատումներ ալ կային: Նորատուռեկեանի հրաժարելով ժողովը մնաց անդրուի: Աս ատեն անցանք Մանուկեանի, Բերայի 70-ի հրկիզելոց խնդիրներն, հիմա ու նոր անտեսական ժողովներ հարուածեցան, մեղաւոր ու արդար մէկ ջրով լուացուեցան, և ասանկով ժողովը յուսահատեցաւ զնայ: Նորատուռեկեան ժողով ալ դժուարաւ կ'ընտրուի, վասն զի կամաց կամաց անանկ կըլլայ որ ամէն մարդ պիտի ուզէ հեռու մնալ ազգային այն գործերէն, ուր դրամական խնդիր կայ: Մէկը պատաւոր կերպով իր գործը կը կատարէ, բայց թշնամի ունի, գուցէ երբեմն ալ սխալած է, ալ կըսուի սին յարձակումներ, ձրի դրաւորութիւններ, ժողովներ, լրագիրներ մէկ կըլլան. մարդը բանը գործը ձգելու ինքզինքը պաշտպանելու է, դատաստանի դիմելու է, դատաստանի դիմել ալ չըլլար, աղգային գործ է, ինչպէս տաճկին դուռը

մի կէս պատով բաժանած գոմից, ակտուից. ընդհանուր է մուտքը թէ իրենց և թէ անասուններին համար: Բնիկներին գլխաւոր պարագմունքներն են երկրագործութիւնը, այգեգործութիւնը, մշակութիւնը: Նրանց ապրուստի ամենամեծ աղբիւրը այգիներն են, որոնք իրենց պատրաստում են ձմեռուայ պաշարը. խոտը պահում են անասունների համար. ծառերի չորուկները, ընտանի կենդանիների աղբերը չորացնում գործ են դնում վառելու: Պտուղները չորացնում են (չիր են անում) ձմեռն ուտելու համար: Պտուղներից գլխաւոր հոգատարութեան առարկան թուփն է, որից պատրաստում են դոշաք, բաստել, չիր, արագ: Ներամաշտակութիւն չը կայ: Միջանից, սալորից, տանձից նոյնպէս չըբ են պատրաստում: Վիսաւոր ուտելիքներն արմիք ու պտղեղէն են, միսը շատ թանկ են գործ դնում. տաւրուայ մէջ 2—3 անգամ: Արհեստաւորներ շատ քիչ կան, եղածներին էլ Աստուած արհեստաւոր համարի. քիչ թէ շատ իրենց արհեստին դիտակ են պղնձագործներն ու դարբինները:

Բնիկները հային սեփական երկու փետ յատկութիւնները՝ հիւրասիրութիւն և ընտանեկան սրբութիւն՝ կիսով չափ կորցնելուց յետոյ, ամուր պահած են կրօնական դրացումները: Ամենայն երկերոյ, մանաւանդ կիրակիամուտ ու տօն օրերը, եկեղեցին միշտ գրեթէ լիքը կը տեսնէք անթիւ աղօթողներով: Հարս ու աղջիկները միայն մեծ տօներին կարող են ժամ գնալ. միւս ժամանակներում ոչ, նրանք պէտք է տանք մնան:

Չը նայելով այդ ամենին, ամեն որ հետաքրքրվի, բնիկների հետ խօսակցութեան, գրոյցի մէջ տեսնել, կը գայ այն եղբայրացութեան, որ դրանց շատ հնչողութեամբ և կարճ միջոցում կարելի է ուղիղ ճամբի բերել: Կարծես, մի յանկարծաճաճայց գործը դիպուած միանգամից շփոթել, ակա-

մայ գայթակղութեան մէջ է ձգել, որից ազատուելու կարիք զգում են, բայց սպասում են դրոյսի օգնութեան. այն ինչ հէնց մեծ դժբախտութիւնը նրա մէջ է, որ դրսից դրանց օգնութեան հասնելու մտածողներ չը կան, այն ինչ չըջպաշտում են դէպի խորխորատը մեղոյ պարագաներով ու հարեաններով: Նրանք իրենց յոյսերն ամեն բանից կարելով, աչքերը դարձրած են դէպի մեր ողորմած կառավարութիւնը և իրենց փրկուկութիւնը նրանից են միայն սպասում: Պէտք է ճշմարիտը խստորանշտ, որ նրանք բոլորովին անկեղծօրէն հաւանած են մեր կայսերութեան պաշտօնեաներին, ամենայն ակնածութեամբ հրապարակում են նրանց և ի բոլոր սրտէ օրհնում են այն օրը, երբ մասնատականքներից ազատվելով ըրիտօնեայ պետութեանը հպատակազրկելուց և առ թիվ կայ այսպէս լինելու: Բարեխնամ տէրութեան յօգուտ տեղացիների գործ զրանքները՝ ճանապարհներ բանալը, բաղադրի փողոցների զիւրները լուսաւորելը, նա մանաւանդ զեղեցկաչէն ու փառաւոր դպրոց բանալը, ձրի աշակերտներ ընդունելը և այլն և այլն, այս ամենը միանգամայն երախտապարտութեան մէջ են դրած շտեմ տեղացիներին...

Բնակիչների միւս զատակարարը—նորիկները, որոնք յարմար ժամանակին իմացել են կաղզուան ուր կ'օրիւ, չնչին գումարներով յաջողացել են մեծ մեծ կայտաճենքի ձեռք բերել Տաճկաստանի գաղթող թուրքերից: Այսօր դրանք ձեռքին է կաղզուանի աղբիւրի, ծառատանների ու տների մեծ մասը—գրանք են տեղի հարուստները. պատրուկ են բացառապէս առեւտրով: Այդ նորիկները հայ դաղթականներ են Ալեքսանդրապոլից, Երեւանից, Կողբից, Բիթլիսից: Գրանք, որ ապաւնազդաբար առաջաւոր, հարուստ, իր բանիմաց

դատակարարն են կաղմում, շատ ճարպիկ կերպով վարպետացած են միջոցները քանելու և ուղեւոր կանելու արհեստին: Գրանք առեւտրականների այն տեսակիցն են, որոնք ամեն հնարքով ամեն ինչ պատրաստ են ծախել, միայն թէ մի քանի կողմերով չաղանան քանկները. այս տեսակիցն են, որոնց կարճ խօսքով անուանում են խաչազգոյներ: Նրանք իրենց շատ մեծ, շատ բարի մարդիկ համարելով, օրնպական բարձրութիւնից են նա յոյս ընդունելով վրա, որոնք, նրանց կարծիքով, ուրիշ բան չեն, եթէ ոչ երկու ուղի վրա ման և կող անասուններ: Ոչ մի դէպքում չեն գնայ բերանների հետ խորհրդակցելու որ և ինչ հասարակական պիտոյքների մասին. դա կը լինի ստուրթիւն, անպատուութիւն: Նորիկները հաւատացնում են, որ իրենք ունեն իրենց առանձին ժողովներ, իրենց առանձին կազմակերպութիւնը, խորհուրդը: Այո, ճշմարիտ է, ունեն ժողով անխորհուրդ՝ տնարդկային: Նրանք ամեն բանից առաջ միշտ իրենց անձնական շահն աչքի առաջ ունենալով, գլխովին մտածում են բոլոր միջոց գործ դնել այնտեղի պաշտօնական անձերին, ատոմանաւորներին, սպաներին, մինչև իսկ հասարակ զինուորին հաճանալու, դրաւելու, որոպէս կ'անար: Նրանց համար չը կայ ազգ, դպրոց, եկեղեցի, չը կայ սրբութիւն. ամեն ինչը փողն է և ամեն ինչ վաճառելի... Բայց փորձ փորձի, գնմ մօտեցիք դրանց, խօսիր հետները մեզ հետաքրքրող դէպքերի մասին, ինչպէս կը հիմնաս. ինչ ազնիւ հոգիք, ինչ բարի սիրտ, ինչ մարդասէր անձինք գտած կը կարծես, մինչև անգամ չես վարանիլ մահուան դատապարտել, ու մնաց լոկ հարցափորձի, բայց երբ մօտ մօտենաս, լաւ ճանաչես դրանց, կիմանաս որ վերին

աստիճանի վարպետութիւն վարագործած են, վերցրու վարագործը և դարձահոտութիւնն աշխարհ կապականի... Այդ ժամանակ միայն կը համոզվես, որ դրանք և դրանց պէտքերը շատ շատ արժանի են մի քանի քաղաքներում հարուստ խանութներ ունենալու, ժողովրդի մէջ աղայի անուշով տըղրուկի ու դաւաճմանի դիր կատարելու, մի խօսքով դրանց միմիայն ըստ ամենայնի արժանի կը գտնես ժանգոտ ու զեղնած երեսով ներկայ դարիս մէջ ազատ ապրելու... Հշմարիտ է, այս տեսակ ցեղեր թէ և ամեն քաղաքում և ամեն հասարակութեան մէջ կան, սակայն այն մեծ զանազանութեամբ, որ ուրիշ տեղերի ժողովուրդը գոնէ ճանաչում է իր մարմին ցեղերին, մտածում է դրանց վնասելու, ոչնչացնելու մասին, հարանք է որոնում դրանցից ազատվելու, դրանցից ինչպէս թիւնաւոր օձերից զգուշանալու համար. իսկ կաղզուանի բնակիչները խեղճ են և շատ ողորմելի սրանց թշուառութիւնը հէնց նրա մէջ է, որ կարողութիւն, ընդունակութիւն չունեն իրենք իրենց վիճակի մասին մտածելու, իրենց չար ու բարին որոշելու: Քրդերից ու տաճիկներից հարստահարված արարածները, հարստահարվում են և այժմ, և տանում են սպի վիճակը միանգամայն ընտելացած լինելով, որ այդ է Աստուծոյ իրենց վիճակուած բաժնը, որի դէմ մաքառել Աստուած զայրացնել են համարում...

(Կը շարունակվի)

երթալ, կը վայելէ: Օրինակ մը ունենալ պէտք է: Սիւնի Սէթեան, տնտեսական ժողովի անդամ, որուն ղեկին վրայ վարչապետութիւններ եղան Ազգ. ժողովի մէջ, հիմա մարդը ժողովէն կը պահանջէ որ իր ղեկ խօսուածները գրաւոր իրեն տան, և չեն տար: Գուցէ զատ կը բանայ: Մարդը զատ բանայ մէկ կերպ, չը բանայ ուրիշ կերպ: Ասոր աղէկը ամենեւին չեն խառնուիր ասանկ գործերու մէջ կը լինայ կերթայ:

«Աւտոմատական» ըստած խորհուրդն ալ ցըրած է: Արդէն ասիկայ ինքնին ոչինչ է: Քանի որ կըրթական խորհուրդը մը ոչինչ նշանակող չէր լըրդը մը, չունի ո և է իշխանութիւն, եղբիւր չէ եղբիւր, մի և նոյն բանն է: Իր գործն է գրադիր վարժապետներու, տիրացուներու կոնիւնկուր: Բայց եթէ խեղացի և կարող անձերէ բաղկանայ այդ կըրթական ժողովը, գուցէ ուրիշ միջոց գտնէ գործ անենալու և օգտակար ըլլալու:

Ասոնք, իբր օրինակ, առաջ ընդունին որ տեսնէ՞ք Ներքին գործ, ներքին գործ պետաւոր գործերը քնն վիճակի մէջ են: Կարծենք թէ լաւանալը ալ չունին:

Պօլիս զանազան եկեղեցականներու համագումար ժողովը երբեմն երբեմն կենդանութեան նըլան ցոյց կուտայ ինչպէս առջի շարքի: Այդ համագումար ժողովը գումարեցաւ Կիլիկիոյ կաթողիկոսական խնդրովը գրադիր: Տեսնելով որ ճար կայ Կիլիկիոյ կաթողիկոսը կարգի բերելու, եկեղեցականք պիտի ուզեն կրօնական պակասութիւն գտնել Կաթողիկոսին վրայ և պաշտօնական ընել: Եթէ այս պատճառով իրաւ է, քնն չիփոխութիւններ, քնն խառնակութիւններ և կոնիւնկուր: Համագումար ժողովը իր մէջէն ընտրեց հինգ հոգի՝ մասնագիտով մը որ պիտի ուսումնասիրէ այս խնդիրը:

Պաշտօնական ժողովներէն եթէ անցնենք անպաշտօն ժողովներուն, հոս ալ ուրիշ կերպ կը տեսնենք: Այսպէս է Սովետաց Գանձնաժողովի գործը: Իր քովը մնացած ստակովը այդ Գանձնաժողովը քնն Պօլիս Սթամպուլի կողմը խան մը վճարելով 6500 ոսկի (մօտ 60,000 ռուբլ): Ուրիշ նամակաւ կը ըստած ենք թէ հոս այս գործողութեան վրայ լաւանակ գանգաւոր կայ: Մնացաւ անգամ Ազգ. ժողովի նստքի մէջ պ. Գաբրիէլեան ալ հարցում ուղղած էր այս մասին թէ քնն Պօլիս Գանձնաժողովը այդ չէր զննած է առանց հարցնելու Ազգ. վարչութեան և քնն չէր զննած է յանուն Կիլիկիոյ կաթողիկոսին, զի եթէ ազգին վրայ դարձնելու հարկ ըլլայ դարձնալ մօտ 2,000 ռուբլ ծախք կըլլայ: Նայենք քնն պատասխան պիտի բերէ վարչութիւնը: Այս կէտերը մէկի զննելով Սովետաց Գանձնաժողովը ըրած գործը դէ՛ թան մը չէ, դէ՛ Ներքին պարագայի մէջ: Այդ հատուածին խանի բերած վարձը կը համապատասխանէ 0/7 տոկոսի, որ աղէկ բան է: Խանը թէպէտ ծովէն հեռու է, բայց բանակ տեղ է, սակայն կըսուի թէ ապա-րային մէջ կրնայ ըլլալ որ այդ տեղը իր ար-մէջը կորսնցնէ: այդ ուրիշ խնդիր է և չենք զի-տել թէ ապագային մէջ Պօլիսը որ կողմը արժէք պիտի ունենայ: Դովեղեցը բնական է որ միշտ լաւ է, բայց միանգամայն բնական ալ է որ ծովէն դէպքը ալ ամէն ատեն տեղ չը կայ գնելու: Կար-գիւրդ ուրիշ աղէկ բուռ մը, բայց ստակը չէր բա-ւար: Սովետաց ժողովը անդամներն ալ գործի մը-կեր ըլլալով ըրածնին գիտնէ: Չենք գիտեր, կա-րիւր է որ մը այդ խանը վարձաւոր ալ չունենայ, բայց առ այժմ լաւ է: Կըսուի թէ եթէ այդ խանը քանին, մէջէն եղած երկարութեւնը ծախսին, ա-ւել քան 60,000 ռուբլ կը ընէ: ասիկայ աղէկ բան է: Ասոնցմէ զատ Կիլիկիոյ կաթողիկոսը յայտա-րարած են որ, եթէ ազգը գոհ չըլլանայ, իրենք պատրաստ են ամբողջապէս վճարել այդ խանի տակը և խանը ընել իրենց ստացուածք: Այս յայտարարութիւնը ըրած են ո. Պարթաբեքչի, ուրեմն եթէ ազգը գոհ չէ փութալու է յայտնել անանց ժամանակ անցնելու: Կը մնայ դարձնելու խնդիրը, յայտնի է որ եթէ Կիլիկիոյ կաթողիկոսը մնայ խանը ծախքն ալ անոնց կը վերաբե-րին: Գալով թէ ինչու Կիլիկիոյ կաթողիկոսն անուանը անուան է այս խանը, ահա պատճառը: Պօլիսը մէջ եկեղեցիները և բարեգործական հաստատու-թիւնները քաղաքական անձ չեն սեպուիր, ուստի անուանը չեն ընել: Քանի որ վազը ք ալ կայ, անպատճառ ծախքի մասին չըլլայ, անպատ-ճառաւորաբար եթէ վազը ք է մղկութիւնուն մը-կան կերթայ, ամէն կերպով գործերնին դուռը է: Կիլիկիոյ մը կալուածքը ընդհանրապէս ասպէս կալուածուի, օրինակի համար փոխի կալուածները անուան են սեպակաւութիւն Գրիստոստերի

որդուն Գովաթիայ: Աստուածածին եկեղեցւոյ մը կալուածները կարճաժամկետին, սեպակա-ւութիւն Մարտաթի, Գաթերն Գովաթիայի: Խա-խուտ և վտանգաւոր վիճակ: Շատ անգամ ալ եկեղեցւոյ կալուածներն կանցնին հարուստի մը վրայ, որ ժառանգ ալ ունի, հարուստն ալ թուղթ մը կուտայ եկեղեցւոյն, թէ այդ ապրանքը որչափ որ իրեն անուանն է, բայց եկեղեցւոյն կը վերաբերի: Իսկ երբ եկեղեցի կամ հիւանդանոց չը կայ մէջ տեղը, այն ատեն գործը կը դժուա-րանայ և ասանկ պարագայ ալ քիչ կը պատահի: Ինչպէս է այժմ Սովետաց Գանձնաժողովի դէպքը: Այդ խանը չէ մի եկեղեցի է, ոչ մի բարեգոր-ծական հաստատութիւն, ուստի լաւագոյն սե-պուած է մինչև անօրինութիւն մը ընել Կիլի-կիոյ կաթողիկոսին անուանը արձանագրել, նա ալ թուղթ մը կուտայ պատրիարքարանին և գործը այսպէս կը մնայ: Իսկ նուիրատուները պէտք չէ որ ու-նենան ո և է երկուդ մը: Կը մնայ այն խնդիրը, թէ քնն չը զարդուցին աղգային վարչութեան: Պատճառը փնտրուի է այն տխուր իրականու-թեան մէջ որ զանազան գործող մարմինք զիրար չեն յարգեր: Սովետաց Գանձնաժողովը չարաչար աշխատած է և կը վախնար որ այդ ստակը եթէ դնէր Ազգ. վարչութեան արամադրութեան ներքե-կընար ըլլալ որ ուրիշ բաներու գործածին, պատ-րիարքարանի պարտքը տան և այլն, ուստի այս վտանգին առաջն ստանալու համար չէնք մը զը-նած են, որ ըսելը չըմնայ: Հիմա կը մնայ սպա-սել որ Սովետաց Գանձնաժողովը իր հաշիւը ներ-կայացնէ: Բնաւ երբեք տարակույսի ստուեր մը անգամ ունենալու չենք, և ցիտենք որ շատ հայրենասիրական ոգով շարժած են: Սովետաց աս-տիկ ժամանակները, երբ կը պահանջէին որ հաշիւ տրուի մենք ևս զրեցնէր, հասցուցնէր «Մշակի» խմբագրութեան թէ ինչ վտանգնե-րն այն միջոցին հաշիւ պահանջելէն, և «Մշակ» ալ իր խմբագրական յօդուածներով հանդարտե-ցուց ժողովի միտքը և նուիրատուութիւնները շարունակեցին: հիմա պէտք է, որ կանոնաւոր կերպով հաշիւ տրուի: Մենք կուրծն կը հաւա-տանք Սովետաց Գանձնաժողովի բարեխղճութեան վրայ, սակայն հայ ազգին հայ հակառակորդ-ները կուզեն օգտուիլ այս պարագայէն, որպէս զի յուսահատութիւն բերեն ժողովի վրայ և ի հարկին ամենեւին այլ ևս նպատ չը արուի: Սո-վետաց Գանձնաժողովը պէտք է զիտնայ որ ինքն որչափ ալ աշխատի, բայց կան ևս փշտամա-լճաններ, որք կուզեն ցածեցնել բարեխղճութեան յետին կաթիլը, մարել հայ արեւելու մէջէն հայ-րենասիրութեան յետին կաթիլը: ասոնց թակարդ-ները պէտք է ի դերն հանել. յուսով կը սպասենք որ քիչ ատենէն կը տեսնենք կանոնաւոր հաշիւ-ներ հրատարակուած:

Խորիման սրբազան անցնալ շաբթու մէջ հե-ռագիր մը դարձնելով Պօլիս կը բողոքէր թէ չա-րաչար կերպով և սխալ մեկնուած է «Մարտաթի» մէջ, իր գործերն վանի համալաւոր դէպքերուն և հեռագիրներուն առթիւ: Մենք փտած էինք Խորիման սրբազանի հայրենասիր ոգւոյն վրայ և շատ ուրախ ըլլալու են ամեն հայր, որ ամեն թակարդներ պիտի պատուեն: Նամակը երկար եղաւ. ասոր և ուրիշ նիւթերու վրայ ուրիշ առթիւ: «Փունջ» թերթը, որ շաբթը երկու անգամ կը հրատարակուի, այսուհետեւ պիտի սկսի, յա-նա՛րկայ շաբթի կարծենք, ամենօրեայ ըլլալ: Պէտք եղած ձեռնուածութիւնները եղած են և կը լսենք թէ կաշխատին որ կանոնաւոր թերթ մը ըլլայ, և չնորձով ու համով հոտով յօդուածներ ունենայ: Կարծենք թէ ամենօրեայ «Փունջ»-ը հակա-Ներքինան պիտի ըլլայ և ջերմ պաշտպան Ազգ. ժողովի: Կը հաւատանք թէ լաւ աշխատակից-ներ պիտի ունենայ և որոշ ուղղութիւն ունեցող թերթ մը պիտի ըլլայ: Կրնանք ենթադրել թէ աշխոյժ թերթ պիտի ըլլայ, ինչպէս են ընդհա-նրապէս ընդդիմադիր թերթերը:

Դրան հայ պաշտօնեաները հրահանգ ընդունած են թիւրք կառավարութիւնէն, որ կաթողիկոսա-կան խնդիրը չուտ վերջացնել տան:

Երբ ստույգ կը խօսուի թէ Ռուսիոյ կառավա-րութիւնը ծանուցագիր տուած է Դրան հաճա-Հայաստանի բարեկարգութեան փութով գործա-դրութեան համար: Մենք մեր կողմէ իբրեւ լուր մը կը հաղորդենք այս, բայց ստուգութեան չենք կըր-նար երաշխաւորել տակալին:

Դրան հայ պաշտօնեաները հրահանգ ընդունած են թիւրք կառավարութիւնէն, որ կաթողիկոսա-կան խնդիրը չուտ վերջացնել տան:

Երբ ստույգ կը խօսուի թէ Ռուսիոյ կառավա-րութիւնը ծանուցագիր տուած է Դրան հաճա-Հայաստանի բարեկարգութեան փութով գործա-դրութեան համար: Մենք մեր կողմէ իբրեւ լուր մը կը հաղորդենք այս, բայց ստուգութեան չենք կըր-նար երաշխաւորել տակալին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

«Kölnische Zeitg.» լրագրի մէջ տպւած է հետեւեալ հեռագիրը Բերլինից: Ռուսաց կայսրը և Կայսրուհին Կօպէնհագէնից Ս. Պետերբուրգ ու-ղերվեցան: Այդ վերադարձը վերջ դրեց ամեն տեսակ լուրերին ուստայ և ցերեմանական կայսրը-նրի տեսակցութեան մասին: Այդ լուրերը, որոնք Կօպէնհագէն էլ հասան, վերջը անհիմն յայտնե-ցան: Այստեղի պաշտօնական շրջանների մէջ հա-ւատացնում են, որ երկու կայսրների տեսակցու-թեան մասին չեն եղել ոչ պաշտօնական և ոչ կիսապաշտօնական բանակցութիւններ: Գերմա-նիայի յարաբերութիւնները Ռուսաստանի հետ բարեկամական են և նրանք կարօտ չեն բարձրա-գոյն հաստատման: Ֆրանսիայի մէջ կատարված անցքերի վրա Բերլինի նայում է հանգստու-թեամբ և զգուշութեամբ: Ռուսաստանն էլ դեռ ևս նրան երկուդ չէ պատճառում: Նա առաջվայ պէս այն կարծիք է, որ արեւելեան գործերը չեն հետաքրքրում Գերմանիային և որ նրանց համար չէ կարելի դռնել մինչև անգամ մի դիմադրի ու-կորներ: Եթէ Գերմանիան անտարբերութեամբ է վերաբերվում թուրք-չերքեսիական սահմանական հարցին, այնու ամենայնիւ նա պէտք է ուղարկու-թեամբ հետեւի ուստայ հսկայի գործադանաւուն, մա-նաւանդ նրա դիտարկութիւններին: Կ. Պօլսի վերաբերութեամբ: Հարկաւոր դէպքում անկաս-կած Գերմանիան կը սկսէ գործել: Այն ժամանակ պէտք է կարծել, որ Անգլիան էլ կը վերադառ-նայ իր հին քաղաքականութեանը, որ այդքան հոռւորով պաշտպանում էր լուր Բիկոնսֆիլդը: Այդ պատճառով մեզ պէտք է չը զարմացնէ այն կատարված անընդհանրութիւնը, որ միշտ ցոյց է տուել Գլադստոն արտաքին քաղաքականութեան վերաբերվումը: Նրա ճանապարհորդութեանը դէպի Դանիա գերմանական կառավարչական շը-ջանները անտարբերութեամբ վերաբերվեցան:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Անգլիացի վէրնէյ Լօլէտ վաղուց մտածում էր երկաթուղի անցկացնելու մասին Պարսից ծոցի և Միջերկրական ծովի ափի մէջ: Վերջապէս նա վճռեց անձամբ տեսնել այն տեղերը, որ պէտք է անցնի այդ ճանապարհը և 1878 թիւն սկսեց իր ճանապարհորդութիւնը: Այժմ, վերադառնա-լով այնտեղից, նա նկարագրեց իր ճանապարհոր-դութիւնը և նոր ճանապարհի նախագիծը: «Մեր ապագայ ճանապարհը դէպի Հնդկաստան» վեր-նագրով: Ձեռնարկով առարկայի լրջութեանը, հեղինակը կենդանացնում է նկարագրութիւնը հետաքրքիր պատմութիւններով: Անցնելով Մեզ-պոսամիայի միջով, նա հարկանցի կերպով խօ-սում է Աբրահամի, Ներքովի և Բաբելոնի ան-աշտարակի վերաբերիւմ լեգենդաների մասին, իշուած է եղբայրացիներին, ասորիստացիներին, պարսկական թագաւորներին, հռոմէացիներին և սկսելի մանրամասն պատմում է այդ տեղերում այժմ ապրող արաբների, թիւրքերի և քրիստոն-եաների, որոնց հետ անգլիացիները ստիպված կը լինեն գործ ունենալ նրանց երկրի միջով ճանա-պարհ անցկացնելու ժամանակ: Վերնէյ Լօլէտ ասում է. «Իմ ամբողջ ճանապարհորդութեան ժա-մանակ ևս լուսւ էի այնտեղի ազգաբնակիչներին, որ նրանք ցանկանում են երկաթուղի ու-նենալ: Տրիցօլիտում, Օրֆում և Գիարբեքիում հարուստ բնակիչները յայտնում էին, որ իրանք պատրաստ են ոչ միայն բարոյական օգնութիւն ցոյց տալ անգլիացիներին երկաթուղի անցկաց-նելու ժամանակ, այլ և նիւթական: Որովհետեւ իրանք ձեռնկերութիւն չունեն, այդ պատճառով արեւմտեան իւրօպան պէտք է օգնէ նրանց այդ գործում: Վերջապէս թիւրքներն մէջ հեղինակը ա-սում է, որ ոչ մի տեղ ամբողջ աշխարհին երե-սին երկաթուղին չէ կարող ունենալ այնպիսի նշանաւոր քաղաքական և տնտեսական շահեր, որպէս այդ նոր ճանապարհը դէպի Հնդկաստան:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ
ՓԱՐՔ, 11 հոկտեմբերի: Ֆրանսիական արմատական կուսակցութեան ընդհանուր ժողովը որոշեց զիմէ կառավարութեանը հարցով ընդհանուր քաղաքականութեան, պատգամաւորների ժողովի գումարման յե-տաճելու, Տրիցօլենին արձակելու և Տօնի-նի հարցը վերաբերութեամբ:

ԽԱՐԱՎ, 12 հոկտեմբերի: Տօնավաճա-ռի մէջ բուրդը չէ ծախվում: Եկողները ան-ցեալ տարվանից պակաս են:

ԲԻՐԻՆՍԿ, 12 հոկտեմբերի: Վոյզա գե-տի մակերեղովը զրօնց 29 վերնոկ բարձր է: 6° տաքութիւն կայ:

ՕԴԷՍԱ, 12 հոկտեմբերի: Այս տարի մինչև հոկտեմբերի 1-ը այստեղի նաւա-հանգստից արտահանված է 38,687,037 պուդ գանազան հացահատիկներ, և 202,402 վեդրօ սպիրտ:

ՎԵՐՆԻ, 12 հոկտեմբերի: Չինաստանի հետ սահմանագծի անցկացնելը վերջացրած է և սեպտեմբերի 25-ին Չուգուչուկի մէջ ստորագրված է պրօտոկոլը երկու պետու-թիւնների հաւատարմատարների՝ գեներալ Ֆրիդէից և Հէբէյ-Սարան-Շենտայից:

ԼՈՆԴՈՆ, 12 հոկտեմբերի: Լուր է տա-րածված նոր երկրաշարժի մասին Չեմպեյի մէջ, որ շատ վնասներ է պատճառել:

ՓԱՐԻՑ, 12 հոկտեմբերի: Այսօր բացվե-ցան Ֆրանսիական ազգային ժողովների նիստերը: Պատգամաւորների ժողովին ներ-կայացրած հաշիւի մէջ Տօնիկի հարցի վե-րաբերութեամբ ասված է, որ Ֆրանսիան պատրաստ է շարունակել բարեկամական բա-նակցութիւնները Չինաստանի հետ և, յու-սալով անցքերի վրա, կը ստիպէ Չինաստա-նին գործերի դրութեան վրա աւելի ճշը-գութեամբ նայել, մանաւանդ եթէ նա կը համոզվի, որ Ֆրանսիայի քաղաքականու-թիւնը չափաւոր է և մի և նոյն ժամանակ վճռողական:

ՎԻԵՆՆԱ, 12 հոկտեմբերի: Աւստրիական պատգամաւորների ժողովի նախագահ ըն-տրված է իշխան Չարտօրիսի: որ սկը-բնական ճառի մէջ ասեց, «Բոլոր ժողո-վուրդները խաղաղութեան միակերպ պէտք են զգում: Բոլոր կառավարութիւնները տրամադրված են նրան բաւականութեւն տալ և այդ պատճառով պատերազմական բիւզիսները քննելու ժամանակ պատգամա-ւորների ժողովը պէտք է ի նկատի առնի երկրի Ֆրիանսական դրութիւնը: Բայց այ-նու ամենայնիւ նրանք պէտք է շատ յոյս չը դնեն խաղաղասէր տրամադրութեան վրա և պէտք է այնքան միջոցներ տան, որքան անհրաժեշտ են Հաբսբուրգեան պետու-թեան պատիւը, շահերը և իրաւունքները պաշտպանելու համար»:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 հոկտեմբերի: Կա-ռավարչական հաղորդութեամբ հեղքվում են լրագրական լուրերը Նիկոլաեֆի երկա-թուղին գանձարանին յատկացնելու մա-սին, որովհետեւ այդ հարցը մինչև ան-գամ չէ յարուցված: Ինչ կը վերաբերի լուրերին քննութեան մասին, նա նշանակ-ված է երկաթուղիները մասնաւոր ընկե-րութիւններին յանձնելու ընդհանուր պայ-մանների հիման վրա 1870—1881 թուա-կանի հաշիւները քննելու նպատակով և մանաւանդ իմանալու համար, թէ արդեք հարկաւոր չէ մի քանի ծախսերը նոր աշ-խատանքի համար երկաթուղին ուժեղաց-նելու նպատակով ոչ թէ եկամուտներից կատարել, այլ ուրիշ աղբիւրներից: Քննու-թիւնը շարունակվում է: «Новое Время» լրագրը լսել է, որ մայիսի 28-ի կանոն-ները լրացնելու համար Ֆրիանսների մի-նիստը օրերումս պետական խորհուրդին մի նախագիծ կը ներկայացնէ, որի համե-մատ պետական բանկը և նրա բաժնիները պէտք է ընդունեն սօլօ-մոնօհակներ այն կալուածատերերի, որոնց կողքերի վրա պարտքեր կան ուրիշ բանկերում կամ մասնաւոր անձանց մօտ: Պետական խոր-հուրդի մէջ շուտով կը քննվի այն հարցը, որ կեղեցիները և վանքերը ներկայացու-ցիչներ ունենան գեմալօմների մէջ: Հօգ-տեմբերի 30-ին նշանակված է Գոստօեֆ-կու գերեզմանի վրա արձանի բացումը:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԻՐՈՒՆԻ

